



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

15.09.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/68

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի
դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ

Կ. Մկրտչյանի (լիազորագիր՝ տրված 14.08.2020թ.),

Ս. Հակոբյանի (լիազորագիր՝ տրված 14.08.2020թ.),

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչներ

Դ.Վարդանյանի (լիազորագիր՝ տրված 13.08.2020թ.),

Ա. Ազատյանի (լիազորագիր՝ տրված 13.08.2020թ.),

Լ. Խալաթյանի (լիազորագիր՝ տրված 13.08.2020թ.),

քննելով «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի
(հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար մագնիսառեզոնանսային տամոգրաֆի
ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով բաց
մրցույթի շրջանակներում «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից 03.08.2020թ. ներկայացված
(04.08.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/68 բողոք) և
կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 03.08.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար սույն թվականի մայիսի 15-ին «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով մագնիսառեզոնանսային տամոգրաֆի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է բաց մրցույթ: Ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել նաև մեր կազմակերպությունը՝ «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Կազմակերպություն): Մրցույթի բացման ժամկետ է սահմանված եղել 25.06.2020թ ժամը 11:00: Մրցույթին հայտ է ներկայացրել նաև «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ ՓԲԸ), որի ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում մրցույթի տեխնիկական բնութագրին, քանի որ մրցույթի տեխնիկական պահանջն էր հանդիսանում բազմամիջուկյան բազմապրոցեսորային կառուցվածք ունեցող աշխատանքային կայանի պրոցեսորի ոչ պակաս, քան 6 միջուկի առկայությունը: ՓԲԸ-ն ներկայացրել է պրոցեսորի 4 միջուկ: Հանձնաժողովը անտեսելով նշյալը հուլիսի 17-ին հրավիրում է գների նվազեցման շուրջ բանակցությունների: Մեր կազմակերպությունը ներկայացել է բանակցություններին և ներկայացրել նոր գնային առաջարկ: Բանակցություններից 7 օր հետո 24.07.2020թ.-ին հրապարակվում է արձանագրություն, որում նշված է, որ մեր գնային առաջարկը մերժվել է, քանի որ ինքնարժեքից ցածր է: Ցանկանում եմ տեղեկացնել, որ բանակցությունների ժամանակ, մեզ այդ մասին չեն զգուշացրել:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետով սահմանում է, որ «Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր

եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին պարտավորեցնել անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 2020 թվականի հունիսի 25-ի N2 արձանագրության 4.1 և հուլիսի 17-ի N4 արձանագրության 2.1 կետերը, ՓԲԸ-ից պահանջել շտկել վերոգրյալ անհամապատասխանությունը և հրավիրել նոր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.08.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

Ընկերությունը 18.08.2020թ. գրությամբ, ի լրումն վերը շարադրված բողոքի, հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով հայտարարված բաց մրցույթին «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն ներկայացրել է General Electric Healthcare USA կազմակերպության կողմից արտադրվող Signa™ Artist մոդելի մագնիսառեզոնանսային տոմոգրաֆը: Տվյալ կազմակերպության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում առկա էին ոչ միայն հնարավոր վրիպակներ, այլ նաև ոչ հավաստի՝ կեղծ տեղեկատվություններ, որոնք ուղղակիորեն ազդել են «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով մրցույթի արդյունքների վրա:

1. Մրցույթի տեխնիկական պահանջ էր հանդիսանում հետևյալը. կրծքագեղձի բիոպսիայի ծրագրակազմը պետք է աջակցի ամենատարածված ՄՌՏ պարագաներին և առնվազն հետևյալ ՄՌ կոճերին.

- 7 ուղանի կոճ
- 2- / 4 / 8 -ուղանի կոճ
- 2- / 10- / 16 -ուղանի կոճ

Օրինակ՝ 7 ուղանի կոճն ապահովում է որովայնի խոռոչի լայն սեպ կրծքավանդակի միջև կրիտիկական անցում կատարելու ժամանակ: Այս ունիվերսալ կոճն ապահովում է բիոպսիան ցանցի տեսքով, ինչպես նաև սյունյակ, որոնք ունեն գերազանց հասանելիություն նույնիսկ դժվար հասանելի անատոմիական տարածքներում: 7 ուղանի կոճի պարագաների լրակազմը պետք է պարունակի առնվազն երեք տարր.

- 70 սմ միացնող սեպ, որն ապահովում է որովայնը և նստում է ողնաշարի կոճի վերևում,

- բարձրությունը կարգավորող գլխամաս

- բարձ՝ ձեռքերը բարձրացրած դիրքում հիվանդի ձեռքի օգնության համար:

7 ուղանի կոճի բիոպսիայի նախնական հավաքածուն Post / Pillar և Grid բիոպսիա մեթոդի համար պարունակում է պարագաներ, ինչպես նաև ասեղների հավաքածու կրթական նպատակներով (ոչ թե մարդկանց վրա օգտագործելու համար), այսինքն. բիոպսիայի բազային հավաքածուն ներառում է.

- բիոպսիայի համար կողային և մեդիալցանցեր

- ասեղի բլոկ (12G) և բիոպսիայի ցանցերի մարկեր

- Բիոպսիայի համար կողային և մեդիալ ցանցեր

Post/ Pillar – 12G ասեղ կրողով Post/Pillar սարք և փորձարկման ասեղ (12G) (ոչ թե մարդկանց վրա օգտագործման համար): Հաշվի առնելով այն փաստը, որ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի մասնագետները ներկայացրել են նույն պահանջն անփոփոխ՝ որպես GE SIGNA™ Artist մոդելի տեխնիկական հնարավորություն, հայտնում ենք Ձեզ, որ համաձայն նույն GE պաշտոնական տեղեկատվության՝ GE SIGNA™ Artist մոդելը չունի 7 ուղանի կոճ և նրա կրծքագեղձի բիոպսիայի ծրագրակազմը ոչ մի կերպ չի կարող աջակցել հետևյալ կոճին, ինչպես նաև չի կարող ունենալ պահանջվող բիոպսիայի համար անհրաժեշտ լրակազմը:

2. Մրցույթի տեխնիկական պահանջ էր հանդիսանում հետևյալը. Գլխուղեղի և պարանոցի հետազոտության համար նախատեսված անկախ կոճային էլեմենտների քանակը պետք է լինի ոչ պակաս քան՝ 16: Հատկանշական է, որ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի մասնագետները գլխուղեղի և պարանոցի հետազոտության համար նախատեսված անկախ կոճային էլեմենտների քանակը ներկայացրել են 28, ինչն ակնհայտ չի համապատասխանում իրականությանը, քանի որ համաձայն նույն GE պաշտոնական տեղեկատվության՝ այդ տվյալը մինչև 28 էլեմենտ է և ստացվում է միայն այլ կոճերի հետ

կոմբինացված լինելու դեպքում, ինչը չի համապատասխանում և նաև ուղիղ հակասում է մրցույթի տեխնիկական «անկախ» պահանջին:

Նմանատիպ ոչ լիարժեք տվյալներ են ներկայացվել մրցույթով նախատեսված այլ կոճերի մասով:

Բազմալիքային կոճ ողնաշարի համար, որի անկախ կոճային էլեմենտների քանակը, ոչ պակաս քան՝ 24, ներկայացվել է բազմալիքային կոճ ողնաշարի համար, անկախ կոճային էլեմենտների քանակը՝ 40: Իրանի հետազոտության համար նախատեսված անկախ կոճային էլեմենտների քանակը ոչ պակաս, քան՝ 12, սակայն իրանի հետազոտության համար նախատեսված անկախ կոճային էլեմենտների քանակը ներկայացվել է 36: Ճկուն կոճերի անկախ էլեմենտների քանակը ոչ պակաս, քան՝ 4, ճկուն կոճերի անկախ էլեմենտների քանակը ներկայացվել է՝ 30:

3. Մրցույթի տեխնիկական պահանջն էր հանդիսանում, որ միաժամանակ միացված կոճերի տարրերի քանակը լինի ոչ պակաս, քան 138: «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի մասնագետները միաժամանակ միացված կոճերի տարրերի քանակը ներկայացրել են 140, ինչը նույնպես հանդիսանում է ոչ ճիշտ ինֆորմացիա, քանի որ դրաց քանակը համաձայն նույն GE պաշտոնական տեղեկատվության՝ մինչև 128 է:

4. Մրցույթի տեխնիկական պահանջ էր հանդիսանում, որ միաժամանակ միացված կոճերի քանակը (հիվանդի սեղանին) պետք է լինի ոչ պակաս, քան 6: «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի մասնագետները միաժամանակ միացված կոճերի քանակը (հիվանդի սեղանին) ներկայացրել են 6, ինչը նույնպես հանդիսանում է կեղծ ինֆորմացիա, քանի որ դրանց քանակը համաձայն նույն GE պաշտոնական տեղեկատվության առավելագույնը 4-ն է:

5. Մրցույթի տեխնիկական պահանջ էր հանդիսանում, որ անկախ թվային ուղիների քանակը պետք է լինի ոչ պակաս, քան 32: «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի մասնագետները անկախ թվային ուղիների քանակը ներկայացրել են 64, ինչը նույնպես հանդիսանում է ոչ ճիշտ ինֆորմացիա:

6. Մրցույթի տեխնիկական պահանջ էր հանդիսանում՝ ՄՌ պատկերների վերակառուցման մոդուլը, որի վերակառուցման արագությունը առանց ինտերպոլյացիայի պետք է լիներ (մատրիցա 256×256) ոչ պակաս, քան՝ 16900/վրկ: «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի մասնագետները վերակառուցման մոդուլի օպերատիվ հիշողությունը ոչ պակաս, քան 48 ԳԲ են ներկայացրել, հիշողությունը (SSD տիպի) ոչ պակաս, քան 2, ֆիզիկական սավառակի 1 SSD ոչ պակաս, քան 480ԳԲ և 2 SSD ոչ պակաս, քան 240 ԳԲ:

Վերակառուցման արագությունը առանց ինտերպոլյացիայի (մատրիցա 256×256)՝ 63000/վրկ: Համաձայն նույն GE պաշտոնական տեղեկատվության՝ SIGNA™ Artist մոդելը պաշտոնապես համալրվում է երկու ՄՌ պատկերների վերակառուցման մոդուլներով՝ Reconsrtuction System Gen6 (PERFORMANCE և ADVANCED), որոնց տեխնիկական տվյալները տարբերվում են ներկայացվածներից և նվազագույնին մոտ օպերատիվ հիշողություն ոչ պակաս, քան՝ 160 GB հիշողություն (SSD տիպի) ոչ պակաս քան 2 ֆիզիկական սկավառակի 2× 400 GB SSD և վերակառուցման արագությունը առանց ինտերպոլյացիայի (մատրիցա 256×256)՝ 62000/վրկ: Ուստի՝ ակնհայտ է, որ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն հավանաբար ներկայացնում է իր իսկ կողմից ձեռք բերված համակարգիչը, որի աշխատանքային համապատասխանությունն, ինչպես նաև անխափան աշխատանքը հաստատված չեն GE արտադրողի կողմից:

7. Մրցույթի տեխնիկական պահանջ էր հանդիսանում, որ վերակառուցման արագությունը լինի 25% ինտերպոլյացիայով (մատրիցա 256×256) ոչ պակաս, քան՝ 78400/վրկ: «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի մասնագետները ընդհանրապես չեն հրապարակել այդ տվյալը:

Ուստի, հաշվի առնելով վերոնշյալ անհամապատասխանությունները, պահանջում ենք, որպեսզի «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն վերը նշվածի մասով ներկայացնի պաշտոնական GE-ի և ոչ ներկայացուցչի կողմից տեխնիկական տեղեկագիր (data sheet) պաշտոնապես հաստատված տվյալներով:

Ինչ վերաբերում է «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի գրությանը, ապա հայտնում ենք, որ «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրում հստակ նշված է եղել «բազմամիջուկանի բազմապրոցեսորային կառուցվածք ունեցող աշխատանքային կայանի աշխատանքի էությունը, ուստի կարծում ենք, որ դիրքորոշումը ևս մեկ անգամ փաստում է, որ մեր բարձրագրած հարցը տեղին է և անվիճելի:

ՀՀ ֆինանսների նախարարի 2018թ. դեկտեմբերի 6-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված կարգի 17-րդ կետով սահմանվում է, որ «Բողոքի քննության ժամանակ ծագող հարուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով գնումների հետ կապված բողոքներ քննող անձը կարող է նշանակել փորձաքննություն կամ դիմել տվյալ բնագավառը կարգավորող պետական մարմիններին՝ դիրքորոշում ստանալու համար»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը նշել է, որ կից ներկայացնում է վերոգրյալ սարքի տեխնիկական տեղեկագիրը (data sheet), որի միջոցով մեկ անգամ ևս փաստվում է ողջ վերոգրյալը և հայտնել, որ պատրաստական է այս և վերոգրյալ GE-ից ստացված պաշտոնական փաստաթղթի փորձաքննության ծախսերը հոգալու, եթե կա անհրաժեշտություն:

2. «Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Վ.Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.08.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲԲԱ-ՆԳ-2020/68 բողոքով իրեն որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 13.08.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«GE SIGNA Artist ՄՌՇ-ն համարվում է տեխնիկական բարդ կառուցվածք ունեցող համալիր, որն իր առջև դրված խնդիրները լուծում է միմյանց հետ փոխկապակցված տարբեր առանձնացված սարքավորումների միջոցով:

Այդ սարքավորումներից է համարվում նաև համակարգչային համակարգը, որի գլխավոր խնդիրը մասնագետի կողմից տրված ռեժիմներում ստանալ ՄՌՇ համալիրի համապատասխան հանգույցներից նկարահանման տեսահոսքը, համատեղ

ռեկոնստրուկցիոն հանգույցի հետ՝ 2D և 3D ռեժիմներում մշակել, ռեկոնստրուկցիայի ենթարկել և արտապատկերել բժշկական մոնիտորի վրա:

Համակարգչային համակարգի աշխատանքի հզորությունն ապահովվում է պրոցեսորների միջոցով, որոնք կարող են ունենալ տարբեր տեսակի և քանակի միջուկներ»:

GE SIGNA Artist ՄՌՇ համալիրի համակարգչային համակարգը բաղկացած է կոնսուլից և ռեկոնստրուկցիոն հանգույցից:

GE SIGNA Artist ՄՌՇ համալիրի համակարգիչներն ունեն՝

- 4 միջուկ, որոնք տեղադրված են կոնսուլում,
- 24 միջուկ, որոնք տեղադրված են ռեկոնստրուկցիոն հանգույցում՝ պրոցեսորում (յուրաքանչյուրն իր մեջ ներառում է 12 միջուկ)

GE SIGNA Artist ՄՌՇ համալիրի կոնսուլը ունի նաև հատուկ ճարտարագիտությանը ադապտացված Linux օպերացիոն համակարգ և առանձին ներդրված 1 տերաֆլոպս արագագործությամբ գրաֆիկական համակարգ, որը պարունակում է 5148 միջուկ, որոնց հաշվողական հզորությունները աշխատում են սինխրոն կենտրոնական պրոցեսորի հետ:

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հայտարարած «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական ցուցանիշը համարվում է ապահովել նվազագույնը 16900 կադր վայրկյանում տեսահոսքի մշակումը (256×256 մատրիցայի դաշտում):

GE SIGNA Artist ՄՌՇ համալիրի վերոնշյալ համակարգչային համակարգի կոնսուլում տեղադրված 4 միջուկների, ռեկոնստրուկցիոն հանգույցում տեղադրված 24 միջուկների և գրաֆիկական համակարգում տեղադրված 5148 միջուկների ապահովում է ռեկոնստրուկցիայի ամենաբարդ մշակման 256×256 մատրիցայի դաշտում 62000-63000 կադր վայրկյանում, այսինքն առնվազն 3 անգամ ավել:

Յուրաքանչյուր դեպքում արտադրողն է որոշում, թե համակարգչային համակարգում, որ տեսակի միջուկները ինչ քանակի են լինելու և էական նշանակություն ունի այն հարցը, թե տեղադրված միջուկների համակցությունը արդյոք ապահովում է ընդհանուր համալիրի առջև դրված խնդիրների լուծումը»:

4. ԳԲԲԱ-ՆԳ-2020/68 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/68 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Վ.Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար մագնիսառեզոնանսային տամոգրաֆի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տեխա-Մեդ» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Ապրանքի անվանում	Ապրանքի տեխնիկական բնութագիրը
<p>Մագնիսառեզոնանսային տամոգրաֆ</p>	<p>Գերհաղորդիչ մագնիս</p> <p>Մագնիսական դաշտի լարումը ոչ պակաս, քան՝ 1,5 Տեսլա</p> <p>Մագնիսի մուտքի թունելի տրամագիծը, ոչ պակաս, քան 70 սմ</p> <p>Մեկ սկանի ժամանակ XYZ հարթության մեջ առավելագույն տեսադաշտը, ոչ պակաս, քան՝ 50 x 50 x 45սմ</p> <p>Հելիումի զրոյական ցնդման տեխնոլոգիա</p> <p>Ծրագրային ապահովում</p> <p>ԿԼՀ հետազոտությունների ծրագրային փաթեթի առկայություն (Neuro կամ համարժեք փաթեթներ)</p> <p>Անգիոգրաֆիկ հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Angio կամ համարժեք փաթեթներ)</p> <p>Անոթային հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Cardiac կամ համարժեք փաթեթներ)</p> <p>Քաղցկեղի հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Onco կամ համարժեք փաթեթներ)</p> <p>Մոմոգրաֆիկ հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Breast կամ համարժեք փաթեթներ)</p> <p>Երեխաների հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Pediactric կամ համարժեք փաթեթներ)</p> <p>Հոդերի և ողնաշարի հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Ortho կամ համարժեք փաթեթներ)</p> <p>Շնչառություն պահումով և առանց, որովայնի խոռոչի, կոնք, կոլոնոգրաֆիա, երիկամների, ուրոգրաֆիայի համար ծրագրային փաթեթի առկայություն (Body կամ համարժեք փաթեթներ)</p> <p>ավելի մանրամասն ուսումնասիրությունների ծրագրային փաթեթի առկայություն (Scientific կամ համարժեք փաթեթներ)</p> <p>Ծրագրային ապահովում՝ ուղեղի պերֆուզիայի տվյալների ընլայնված մշակման և գնահատման համար:</p> <p>Ծրագրային ապահովում՝ ուռուցքաբանության արդյունավետ գնահատման և վերլուծության, ինչպես նաև օջախի սեզմենտավորման համար:</p> <p>Ծրագրային ապահովում՝ բոլոր կոնտրաստների արդյունավետության և գլխից և ոտք պատկերների</p>

մշակման առօրյա ծրագրերի արագացման համար:

Ծրագրային ապահովում՝ դիֆուզիոն-կշռված (DWI / DTI) և BOLD ֆունկցիոնալ ՄՌՏ-ի վիզուալիզացիայի արագացման համար: Այս փաթեթի օգնությամբ, սկանավորման ժամանակը հնարավոր է կրճատել և հնարավոր է ստանալ ավելի մեծ տարածական / դիֆուզիոն լուծելիության պատկերներ:

Ծրագրային ապահովում՝ ուղեղի բարձր լուծելիությամբ արտացոլման եռաչափ պատկերման համար, մագնիսական դաշտի միկրոսկոպիկ անհամասերության նկատմամբ գերզգայունություն, որոնք պայմանավորված են դեօքսիդիացված արյունով, արյան քայքայման տարրերի և երկաթի միկրոսկոպիկ նստվածքներով, ինչպես նաև թույլ է տալիս ստանալ գերզգայուն ապացույցներ ուղեղում արյունազեղման, գլխուղեղի երակային անոթների բաժր լուծելիությամբ:

Ծրագրային ապահովում՝ դիֆուզիոն կշռման համար: Փաթեթը ապահովում է ինչպես կլինիկական կիրառում սպիտակ նյութի հիվանդության նկատմամբ (Օրինակ սկլերոզ, գլխուղեղի թերի աճ կամ նյարդային թելերի տեղաշարժ զանգվածի միջոցով), ինչպես նաև ժամանակակից հետազոտություններ:

Ծրագրային ապահովում՝ հնարավորություն է տալիս իրական ժամանակում ավտոմատ հաշվարկել և ցուցադրել վիճակագրական պատկերների (t-արժեքները)՝ BOLD պարադիգմների չափման ընթացքում (ներառյալ 3D շարժման ուղղումն և տարածական զտումը):

Ապահովում է մոզաիկի պատկերի ձևաչափին:

Առանձին անհրաժեշտ է առանձնացնել կրծքագեղձի բիոպսիա ծրագրային ապահովման առկայությունը Կրծքագեղձի բիոպսիայի ծրագիրը պետք է լինի արդյունավետ և հարմար այն միջամտությունների համար, ինչպիսիք են վակուումային բիոպսիան և մետաղալարերի տեղայնացումը: Այն պետք է օժանդակի ինչպես ցանցի մեթոդին, այնպես էլ սյունյակ / սյունյակ եղանակին: Ծրագիրը պետք է ինքնաբերաբար ստանձնի ընտրված թիրախի կորորդինատները և հաշվարկի պահանջվող մուտքի կետը, անկյունը (գրառման / գրառման մեթոդի համար) և ներթափանցման խորությունը:

Կրծքագեղձի բիոպսիայի ծրագրակազմը պետք է աջակցի ամենատարածված ՄՌՏ պարագաներին և առնվազն հետևյալ ՄՌ- կոճերին.

- 7 ուղանի կոճ
- 2- / 4- / 8 -ուղանի կոճ
- 2- / 10- / 16 -ուղանի կոճ

Օրինակ՝ 7 - ուղանի կոճն ապահովում է որովայնի խոռոչի լայն սեպ կրծքավանդակի միջև կրիտիկական անցում կատարելու ժամանակ: Այս ունիվերսալ կոճն ապահովում բիոպսիան ցանցի տեսքով, ինչպես նաև սյունյակ / սյունյակ, որոնք ունեն գերազանց հասանելիություն նույնիսկ դժվար հասանելի անատոմիական տարածքներում: 7 ուղանի կոճի պարագաների լրակազմը պետք է պարունակի առնվազն երեք տարր. - 70 սմ միացնող սեպ, որը ապահովում է որովայնը և նստում է ողնաշարի կոճի վերևում, - բարձրությունը կարգավորող գլխամաս և - բարձ, ձեռքերը բարձրացրած դիրքում, հիվանդի ձեռքի օգնության համար: 7 ուղանի կոճի բիոպսիայի նախնական հավաքածուն, պարունակում է պարագաներ Post / Pillar և Grid բիոպսիա մեթոդի համար, ինչպես նաև ասեղների հավաքածու կրթական նպատակներով (ոչ թե մարդկանց վրա օգտագործելու համար), այսինքն. բիոպսիայի բազային հավաքածուն ներառում է. – բիոպսիայի համար կողային և մեդիալցանցեր - ասեղի բլոկ (12G) և բիոպսիայի ցանցերի մարկեր - Բիոպսիայի համար կողային և մեդիալ ցանցեր Post/ Pillar – 12G ասեղ կրողով Post/Pillar սարք և փորձարկման ասեղ (12G), ոչ թե մարդկանց վրա օգտագործման համար:

Հիվանդի հաղորդակցություն.

- ներքին հազորդակցության համակարգ՝ ներառում է հիվանդի հետ հաղորդակցման համալիր և պնևմատիկ ականջակալներ:
- սեղանն արտակարգ իրավիճակներում կանգնեցման համակարգ
- հետազոտման սենյակում բարձրախոսի և ականջակալների ձայնային կարգավորում

- Բարձրախոսի ձայնի կարգավորում կառավարման սենյակում
- Հիվանդի օգնության գանգի կոճակի առկայություն

Հիվանդի սեղան

Սեղանի հորիզոնական և ուղղահայաց տեղաշարժման համար՝ հետազոտվողի առավելագույն քաշը ոչ պակաս, քան՝ 225 կգ

Սեղանի բարձրությունը հատակից (նվազագույն կետում) ոչ ավել քան 70սմ

պարամետրերի պատկերման մոնիտորներ:

Գրադիենտային համակարգ

Գրադիենտային կոճի ջրային հովացում:

Գրադիենտային դաշտի առավելագույն լարվածությունը, ոչ պակաս, քան՝ 33 մՏ/մ

Գրադիենտային դաշտի աճի առավելագույն էֆֆեկտիվ արագությունը ոչ պակաս, քան՝ 125 մՏ/մ/մս

Շերտի նվազագույն հաստությունը 2D և 3D ռեժիմներում համապատասխանաբար կազմում է ոչ ավել քան 0,1 և 0,1 մմ:

Միացված կոճերի հայտնաբերման ավտոմատ համակարգ

Գլխուղեղի և պարանոցի հետազոտության համար նախատեսված անկախ կոճային էլեմենտների քանակը, ոչ պակաս, քան՝ 16

Բազմալիքային կոճ ողնաշարի համար, անկախ կոճային էլեմենտների քանակը, ոչ պակաս, քան՝ 24

Իրանի հետազոտության համար նախատեսված անկախ կոճային էլեմենտների քանակը, ոչ պակաս, քան՝ 12

Զուգահեռաբար հավաքագրման տեխնոլոգիայով իրանի և հոդերի հետազոտման համար նախատեսված բազմալիքային ճկուն կոճեր - երկու չափսի

Ճկուն կոճերի անկախ էլեմենտների քանակը, ոչ պակաս, քան՝ 4

Միաժամանակ միացված կոճերի տարրերի քանակը՝ ոչ պակաս քան 138

Միաժամանակ միացված կոճերի քանակը (հիվանդի սեղանում)՝ ոչ պակաս քան 6

Անկախ թվային ուղիների քանակը՝ ոչ պակաս քան 32

Պարագաների և կոճերի համար նախատեսված պահարանի (ոչ ֆերոմագնիսական նյութերից պատրաստված) առկայություն

Բարձրությունը ոչ պակաս քան 205 սմ

Խորությունը ոչ պակաս քան 72 սմ

Լայնությունը ոչ պակաս քան 91 սմ

Համակարգչային համակարգ

Հիմնական աշխատանքային վահանակի կառավարման համակարգիչ

Բազմամիջուկանի բազմապրոցեսորային կառուցվածք ունեցող աշխատանքային կայան

Պրոցեսոր ոչ պակաս քան 6 միջուկ

Հիմնական վահանակի կառավարման համակարգչի օպերատիվ հիշողությունը, ոչ պակաս, քան՝ 64 Գբ

Կառավարող համակարգչի համակարգային ինֆորմացիայի և պատկերների պահման ծավալը (SSD տպի), ոչ պակաս, քան՝ 480Գբ

Մեկ 24-դյույմից ոչ պակաս բարձր լուծելիության գունավոր առնվազն LCD տիպի մոնիտոր՝ 1920 x 1200 պիքսելից ոչ պակաս էկրանով, ներկառուցված գամմա կոռեկտման ֆունկցիայով ռենտգենյան նկարների

օպտիման ցուցադրման (ներկայացման) համար և լույսի ավտոմատ կառավարման համակարգով՝ պայծառության երկարատև ապահովման համար

Ցանցային տպման հնարավորություն,
 նկարների DICOM արխիվացում – օպցիոնալ հնարավորության առկայություն

ՄՌ պատկերների վերակառուցման մոդուլ
 Վերակառուցման մոդուլի բազմապրոցեսորային ճարտարապետություն
 Պրոցեսոր ոչ պակաս քան 4 միջուկ
 Վերակառուցման մոդուլի օպերատիվ հիշողություն ոչ պակաս, քան՝ 48 Գբ
 Հիշողություն (SSD տիպի) ոչ պակաս քան 2 ֆիզիկական սկավառակի
 1 SSD ոչ պակաս քան 480Գբ
 2 SSD ոչ պակաս քան 240Գբ
 Վերակառուցման և սկանավորման զուգահեռաբար կատարվող գործընթաց
 Մատրիցայի չափսերը ոչ պակաս 1024 x 1024
 Վերակառուցման արագությունը առանց ինտերպոլյացիայի (մատրիցա 256x256) ոչ պակաս, քան՝ 16900/վրկ
 Վերակառուցման արագությունը 25% ինտերպոլյացիայով (մատրիցա 256x256) ոչ պակաս, քան՝ 78400/վրկ
 Մեկ 24-դյույմից ոչ պակաս բարձր լուծելիության գունավոր առնվազն LCD տիպի մոնիտոր՝ 1920 x 1200 պիքսելից ոչ պակաս էկրանով

Լրացուցիչ համակարգիչ (Host Computer)
 Ոչ պակաս քան 2 պրոցեսորների առկայություն, ամեն մեկը առնվազն 4 միջուկով օպերատիվ հիշողություն ոչ պակաս, քան՝ 96 Գբ
 Հիշողություն (SSD տիպի) ոչ պակաս քան 480Գբ
 CD/ DVD-R սկավառակի և SDHC-ի առկայություն

Աշխատանքային սեղանի առկայություն
 Երկարություն ոչ պակաս քան 120 սմ
 Լայնությունը ոչ պակաս քան 80 սմ
 Բարձրությունը ոչ պակաս քան 72 սմ

Համալրված՝

- ՌՖ վանդակ լրակազմ՝ դիտման պատուհան և բոլոր անհրաժեշտ պարագաներ ներառյալ հետազգոտման սենյակի LED լամպերը
- Անխափան սնուցման սարք – 2 հատ (ՄՌՏ-ի և Հովացման համակարգի համար)
- Հովացման համակարգ
- Շարժական մետաղական դետեկտորով
- Ինժեկտոր կոնտրաստային նյութի համար, երկու սրվակներով ոչ պակաս քան 100/100մլ

Հովացման համակարգ (Chiller)
 Սառցեարտադրողականություն ոչ պակաս, քան 60 կՎտ, սառեցված ջրի ջերմաստիճանը՝ ոչ ավելի, քան 20 ° C, ջրի հոսքը ոչ պակաս՝ 130 լ / րոպե:
 Աշխատանքային միջավայրի ջերմաստիճանը
 -20-ից + 48 ° C

	<p>Մնուցում 3 / PE 400 Վ- ից 480 Վ / 50/60 Հց</p> <p>Այլ ծառայություններ</p> <p>Երաշխիք ամբողջ համակարգի համար առնվազն 12 ամիս</p> <p>Մոնտաժային նյութերի, մալուխների առկայություն անհրաժեշտ համակարգի տեղադրման համար</p> <p>Տեղադրման, թողարկման աշխատանքների կատարում սերտիֆիկացված մասնագետի կողմից</p> <p>Աշխատակազմի ուսուցում տեղում սերտիֆիկացված մասնագետի կողմից</p> <p>Երաշխիքային սպասարկման ընթացքում 2 ամիսը մեկ անգամ հաճախականությամբ արտադրողի կողմից սերտիֆիկացված ինժեների կողմից պրոֆիլակտիկ տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարում</p> <p>Անհրաժեշտ որակի սերտիֆիկատների առկայություն (ISO, CE)</p> <p>Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված</p>
--	--

3. «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, մագնիսառեզոնանսային տամոգրաֆի համար առաջարկվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի Տեխնիկական բնութագիրը
1	<p>Գերհաղորդիչ մագնիս Մագնիսական դաշտի լարումը՝ 1,5 Տեսլա Մագնիսի մուտքի թունելի տրամագիծը՝ 70 սմ Մեկ սկանի ժամանակ XYZ հարթության մեջ առավելագույն տեսադաշտը՝ 50 x 50 x 50սմ Հելիումի զրոյական ցնդման տեխնոլոգիա</p> <p>Ծրագրային ապահովում ԿՆՀԲ հետազոտությունների ծրագրային փաթեթի առկայություն (Neuro XT Package) Անգիոգրաֆիկ հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Angio Pack) Անոթային հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Cardiac Pack) Քաղցկեղի հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Onco Pack) Մամոգրաֆիկ հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Breast Pack) Երեխաների հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Pediatric) Հոդերի և ողնաշարի հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Ortho Pack) Շնչառություն պահումով և առանց, որովայնի խոռոչի, կոնք, կրծնոգրաֆիա, երիկամների, ուրոգրաֆիայի համար ծրագրային փաթեթի առկայություն (Body XT Pack) ավելի մանրամասն ուսումնասիրությունների ծրագրային փաթեթի առկայություն (Scientific Pack) Գրանցման ինտեգրված ծրագիրը (մեկ գրանցում) նախատեսված է օպտիմալացնել եռաչափ (3D) անատոմիական պատկերների համադրությունը և համեմատությունը՝ ստացված CT, MRI, PET (պոզիտրոնային էմիսիոն տոմոգրաֆիա), SPECT (միա ֆոտոնային էմիսիոն համակարգչային տոմոգրաֆիա) և անգիոգրաֆիայի հետ:(Integrated Registration Full Fusion)</p> <p>Ծրագրային ապահովում՝ ուղեղի պերֆուզիայի տվյալների ընդլայնված մշակման և գնահատման համար: Ծրագրային ապահովում՝ ուռուցքաբանության արդյունավետ գնահատման և վերլուծության, ինչպես նաև օջախի սեգմենտավորման համար: Ծրագրային ապահովում՝ բոլոր կոնտրաստների արդյունավետության և զլխից և ոտք պատկերների մշակման առօրյա ծրագրերի արագացման համար: Ծրագրային ապահովում՝ դիֆուզիոն-կշռված (DWI / DTI) և BOLD ֆունկցիոնալ ՄՌՏ-ի վիզուալիզացիայի արագացման համար: Այս փաթեթի օգնությամբ, սկանավորման ժամանակը հնարավոր է կրճատել և հնարավոր է ստանալ ավելի մեծ տարածական / դիֆուզիոն լուծելիության</p>

պատկերներ: Ծրագրային ապահովում՝ ուղեղի բարձր լուծելիությամբ արտացոլման եռաչափ պատկերման համար, մագնիսական դաշտի միկրոսկոպիկ անհամասերության նկատմամբ գերզգայունություն, որոնք պայմանավորված են դեօքսիդիզացված արյունով, արյան քայքայման տարրերի և երկաթի միկրոսկոպիկ նստվածքներով, ինչպես նաև թույլ է տալիս ստանալ գերզգայուն ապացույցներ ուղեղում արյունազեղման, գլխուղեղի երակային անոթների բաժր լուծելիությամբ: Ծրագրային ապահովում՝ դիֆուզիոն կշռման համար: Փաթեթը ապահովում է ինչպես կլինիկական կիրառում սպիտակ նյութի հիվանդության նկատմամբ (Օրինակ սկլերոզ, գլխուղեղի թերի աճ կամ նյարդային թելքերի տեղաշարժ զանգվածի միջոցով), ինչպես նաև ժամանակակից հետազոտություններ: Ծրագրային ապահովում՝ հնարավորություն է տալիս իրական ժամանակում ավտոմատ հաշվարկել և ցուցադրել վիճակագրական պատկերների (է-արժեքները)՝ BOLD պարադիգմների չափման ընթացքում (ներառյալ 3D շարժման ուղղումն և տարածական զտումը): Ապահովում է մոզաիկի պատկերի ձևաչափն:

(Breast Pack) կրծքագեղձի բիոպսիա ծրագրային ապահովման առկայությունը Կրծքագեղձի բիոպսիայի ծրագիրը արդյունավետ և հարմար է այն միջամտությունների համար, ինչպիսիք են վակուումային բիոպսիան և մետաղալարերի տեղայնացումը: Այն օժանդակում է ինչպես ցանցի մեթոդին, այնպես էլ սյունյակ / սյունյակ եղանակին: Ծրագիրը ինքնաբերաբար ստանձնում է ընտրված թիրախի կողողինատները և հաշվարկի պահանջվող մուտքի կետը, անկյունը (գրառման / գրառման մեթոդի համար) և ներթափանցման խորությունը: Կրծքագեղձի բիոպսիայի ծրագրակազմը աջակցում է ամենատարածված ՄՌՏ պարագաներին և առնվազն հետևյալ ՄՌ կոճերին. - 7 ուղանի կոճ - 2- / 4- / 8 -ուղանի կոճ - 2- / 10- / 16 -ուղանի կոճ Օրինակ՝ 7 - ուղանի կոճն ապահովում է որովայնի խոռոչի լայն սեպ կրծքավանդակի միջև կրիտիկական անցում կատարելու ժամանակ: Այս ունիվերսալ կոճն ապահովում բիոպսիան ցանցի տեսքով, ինչպես նաև սյունյակ / սյունյակ, որոնք ունեն գերազանց հասանելիություն նույնիսկ դժվար հասանելի անատոմիական տարածքներում: 7 ուղանի կոճի պարագաների լրակազմը պետք է պարունակի առնվազն երեք տարր. - 70 սմ միացնող սեպ, որը ապահովում է որովայնը և նստում է ողնաշարի կոճի վերևում, - բարձրությունը կարգավորող գլխամաս և - բարձ, ձեռքերը բարձրացրած դիրքում, հիվանդի ձեռքի օգնության համար: 7 ուղանի կոճի բիոպսիայի նախնական հավաքածուն, պարունակում է պարագաներ Post / Pillar և Grid բիոպսիա մեթոդի համար, ինչպես նաև ասեղների հավաքածու կրթական նպատակներով (ոչ թե մարդկանց վրա օգտագործելու համար), այսինքն. բիոպսիայի բազային հավաքածուն ներառում է. - բիոպսիայի համար կողային և մեդիալցանցեր - ասեղի բլոկ (12G) և բիոպսիայի ցանցերի մարկեր - Բիոպսիայի համար կողային և մեդիալ ցանցեր Post/ Pillar - 12G

ասեղ կրողով Post/Pillar սարք և փորձարկման ասեղ (12G), ոչ թե մարդկանց վրա օգտագործման համար:

Հիվանդի հաղորդակցություն. • ներքին հազորդակցության համակարգ՝ ներառում է հիվանդի հետ հաղորդակցման համալիր և պնևմատիկ ականջակալներ: • սեղանն արտակարգ իրավիճակներում կանգնեցման համակարգ • հետազոտման սենյակում բարձրախոսի և ականջակալների ձայնային կարգավորում • Բարձրախոսի ձայնի կարգավորում կառավարման սենյակում • Հիվանդի օգնության զանգի կոճակի առկայություն

Հիվանդի սեղանի Սեղանի հորիզոնական և ուղղահայաց տեղաշարժման համար՝ հետազոտվողի առավելագույն քաշը ոչ պակաս, քան՝ 227 կգ Սեղանի բարձրությունը հատակից (նվազագույն կետում) ոչ ավել քան 70սմ

պարամետրերի պատկերման մոնիտորներ: Գրադիենտային համակարգ Գրադիենտային կոճի ջրային հովացում: Գրադիենտային դաշտի առավելագույն լարվածությունը, 44 մՏ/մ Գրադիենտային դաշտի աճի առավելագույն էֆֆեկտիվ արագությունը 200 մՏ/մ/սն Շերտի նվազագույն հաստությունը 2D և 3D ռեժիմներում համապատասխանաբար կազմում է ոչ ավել քան 0,1 և 0,1 մմ: Միացված կոճերի հայտնաբերման ավտոմատ համակարգ

Գլխուղեղի և պարանոցի հետազոտության համար նախատեսված անկախ կոճային էլեմենտների քանակը, ՝ 28 Բազմալիքային կոճ ողնաշարի համար, անկախ կոճային էլեմենտների քանակը, ՝ 40 Իրանի հետազոտության համար

նախատեսված անկախ կոճային էլեմենտների քանակը, '36 Ձուգահեռաբար հավաքագրման տեխնոլոգիայով իրանի և հողերի հետազոտման համար նախատեսված բազմալիքային ճկուն կոճեր - երկու չափսի Ճկուն կոճերի անկախ էլեմենտների քանակը, 30

Միաժամանակ միացված կոճերի տարրերի քանակը ` 140 Միաժամանակ միացված կոճերի քանակը (հիվանդի սեղանում)` 6 Անկախ թվային ուղիների քանակը`64

Պարագաների և կոճերի համար նախատեսված պահարանի (ոչ ֆերոմագնիսական նյութերից պատրաստված) առկայություն Բարձրությունը ոչ պակաս քան 205 սմ Խորությունը ոչ պակաս քան 72 սմ Լայնությունը ոչ պակաս քան 91 սմ

Համակարգչային համակարգ Հիմնական աշխատանքային վահանակի կառավարման համակարգիչ Բազմամիջուկանի բազմապրոցեստորային կառուցվածք ունեցող աշխատանքային կայան Պրոցեսոր 4 միջուկ Հիմնական վահանակի կառավարման համակարգչի օպերատիվ հիշողությունը, ` 64 Գբ Կառավարող համակարգչի համակարգչային ինֆորմացիայի և պատկերների պահման ծավալը (SSD տպի), 1024Գբ

Մեկ 24-դյույմից ոչ պակաս բարձր լուծելիության գունավոր առնվազն LCD տիպի մոնիտոր` 1920 x 1200 պիքսելից էկրանով, ներկառուցված գամմա կոռեկտման ֆունկցիայով ռենտգենյան նկարների օպտիման ցուցադրման (ներկայացման) համար և լույսի ավտոմատ կառավարման համակարգով` պայծառության երկարատև ապահովման համար

Ցանցային տպման հնարավորություն, նկարների DICOM արխիվացում – օպցիոնալ հնարավորության առկայություն

ՄԴ պատկերների վերակառուցման մոդուլ Վերակառուցման մոդուլի բազմապրոցեստորային ճարտարապետություն Պրոցեսոր 2x12 միջուկ Վերակառուցման մոդուլի օպերատիվ հիշողություն ` 96 Գբ Հիշողություն (SSD տիպի) կամ 2 ֆիզիկական սկավառակի 1 SSD 480Գբ 2 SSD 240Գբ կամ 1 հատ SSD 1000 Գբ Վերակառուցման և սկանավորման զուգահեռաբար կատարվող գործընթաց

Մատրիցայի չափսերը ոչ պակաս 1024 x 1024 Վերակառուցման արագությունը առանց ինտերպոլյացիայի (մատրիցա 256x256) ` 63000/վրկ Վերակառուցման արագությունը 25% ինտերպոլյացիայով (մատրիցա 256x256) (արտադրողը չի հրապարակու այս ցուցանիշը) Մեկ 24-դյույմ բարձր լուծելիության գունավոր LCD տիպի մոնիտոր` 1920 x 1200 պիքսելից

Լրացուցիչ համակարգիչ (Host Computer)

Լրացուցիչ համակարգիչ:Ոչ պակաս քան 2 պրոցեսորների առկայություն, ամեն մեկը առնվազն 4 միջուկով օպերատիվ հիշողություն ` 96 Գբ Հիշողություն (SSD տիպի) 2 ֆիզիկական սկավառակի 1 SSD 512 Գբ 2 SSD 256Գբ CD/ DVD-R սկավառակի և SDHC-ի առկայություն

Աշխատանքային սեղանի առկայություն Երկարություն 120 սմ Լայնությունը 80 սմ Բարձրությունը ն 72 սմ

Համալրված` • ՌՖ վանդակ լրակազմ` դիտման պատուհան և բոլոր անհրաժեշտ պարագաներ ներառյալ հետազոտման սենյակի LED լամպերը • Անխափան սնուցման սարք – 2 հատ (ՄՌՏ-ի և Հովացման համակարգի համար) • Հովացման համակարգ • Շարժական մետաղական դետեկտորով • Ինժեկտոր կոնտրաստային նյութի համար, երկու սրվակներով ոչ պակաս քան 100/100մլ

Հովացման համակարգ (Chiller) Սառցեարտադրադականություն ոչ պակաս, քան 60 կՎտ, սառեցված ջրի ջերմաստիճանը` 16- 20 ° C, ջրի հոսքը >= 130 լ / րոպե: Աշխատանքային միջավայրի ջերմաստիճանը -20-ից + 48 ° C Մնուցում 3 / PE 400 Վ- ից 480 Վ / 50/60 Հց

Այլ ծառայություններ Երաշխիք ամբողջ համակարգի համար 12 ամիս Մոնտաժային նյութերի, մալուխների առկայություն անհրաժեշտ համակարգի տեղադրման համար

	<p>Տեղադրման, թողարկման աշխատանքների կատարում սերտիֆիկացված մասնագետի կողմից Աշխատակազմի ուսուցում տեղում սերտիֆիկացված մասնագետի կողմից Երաշխիքային սպասարկման ընթացքում 2 ամիսը մեկ անգամ հաճախականությամբ արտադրողի կողմից սերտիֆիկացված ինժեների կողմից պրոֆիլակտիկ տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարում</p> <p>Անհրաժեշտ որակի սերտիֆիկատների առկայություն (ISO, CE) Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված</p>
--	--

4. «Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար մագնիսառեզոնանսային տամոգրաֆի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից 03.08.2020թ. ներկայացվել է բողոք, որի քննության ընթացքում «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն միջնորդել է հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով անհրաժեշտության դեպքում նշանակել փորձաքննություն և պարտավորվել հոգալ փորձաքննության ծախսերը:

5. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 17-րդ կետով, հաշվի առնելով «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից 03.08.2020թ. ներկայացված բողոքը բազմակողմանի ուսումնասիրելու անհրաժեշտությունը և վերջինիս պարտավորվածությունը փորձաքննության ծախսերը հոգալու վերաբերյալ՝ 24.08.2020թ. որոշում է կայացրել «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի քննության շրջանակներում փորձաքննություն նշանակելու և փորձաքննության իրականացումը «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին հանձնարարելու վերաբերյալ:

6. «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն 26.08.2020թ. գրությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով, որ ԳԲԲԱ-ՆԳ-2020/68 բողոքի շրջանակներում մեր կողմից ներկայացված միջնորդությունը՝ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ բավարարվել է, Ձեզ եմ ներկայացնում «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի տվյալները, փորձաքննություն իրականացնող մարմնին տրամադրելու նպատակով»:

«Պրոֆտեստ» ՍՊԸ վերոնշված գրությամբ փորձաքննության ծախսերը վճարելու նպատակով ներկայացրել է նաև Ընկերության հաշվեհամարը և բանկի անվանումը:

7. «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն 07.09.2020թ. գրությամբ հրաժարվել է հոգալ փորձաքննության ծախսերը, որի արդյունքում փորձաքննությունը չի իրականացվել:

8. «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն 09.09.2020թ. «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին ուղղված գրությամբ հրաժարվել է փորձաքննության ծառայություններից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի 03.08.2020թ. բողոքը և բողոքի լրացումը՝ կից փաստաթղթերով, «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի 13.08.2020թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում են հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև

առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Այսպես՝ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար մագնիսառեզոնանսային տամոգրաֆի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Ապրանքի անվանում	Ապրանքի տեխնիկական բնութագիրը
Մագնիսառեզոնանսային տամոգրաֆ	<p>Գերհաղորդիչ մագնիս</p> <p>Մագնիսական դաշտի լարումը ոչ պակաս, քան՝ 1,5 Տեսլա</p> <p>Մագնիսի մուտքի թունելի տրամագիծը, ոչ պակաս, քան 70 սմ</p> <p>Մեկ սկանի ժամանակ XYZ հարթության մեջ առավելագույն տեսադաշտը, ոչ պակաս, քան՝ 50 x 50 x 45սմ</p> <p>Հելիումի զրոյական ցնդման տեխնոլոգիա</p> <p>Ծրագրային ապահովում</p> <p>ԿՆՀ հետազոտությունների ծրագրային փաթեթի առկայություն (Neuro կամ համարժեք փաթեթներ)</p> <p>Անգիոգրաֆիկ հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Angio կամ համարժեք փաթեթներ)</p> <p>Անոթային հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Cardiac կամ համարժեք փաթեթներ)</p> <p>Քաղցկեղի հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Onco կամ համարժեք փաթեթներ)</p>

Մոնոգրաֆիկ հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Breast կամ համարժեք փաթեթներ)

Երեխաների հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Pediactric կամ համարժեք փաթեթներ)

Հոդերի և ողնաշարի հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Ortho կամ համարժեք փաթեթներ)

Շնչառություն պահումով և առանց, որովայնի խոռոչի, կոնք, կոլոնոգրաֆիա, երիկամների, ուրոգրաֆիայի համար ծրագրային փաթեթի առկայություն (Body կամ համարժեք փաթեթներ)

ավելի մանրամասն ուսումնասիրությունների ծրագրային փաթեթի առկայություն (Scientific կամ համարժեք փաթեթներ)

Ծրագրային ապահովում՝ ուղեղի պերֆուզիայի տվյալների ընլայնված մշակման և գնահատման համար:
 Ծրագրային ապահովում՝ ուռուցքաբանության արդյունավետ գնահատման և վերլուծության, ինչպես նաև օջախի սեզմենտավորման համար:
 Ծրագրային ապահովում՝ բոլոր կոնտրաստների արդյունավետության և գլխից և ոտք պատկերների մշակման առօրյա ծրագրերի արագացման համար:
 Ծրագրային ապահովում՝ դիֆուզիոն-կշռված (DWI / DTI) և BOLD ֆունկցիոնալ ՄՌՏ-ի վիզուալիզացիայի արագացման համար: Այս փաթեթի օգնությամբ, սկանավորման ժամանակը հնարավոր է կրճատել և հնարավոր է ստանալ ավելի մեծ տարածական / դիֆուզիոն լուծելիության պատկերներ:
 Ծրագրային ապահովում՝ ուղեղի բարձր լուծելիությամբ արտացոլման եռաչափ պատկերման համար, մագնիսական դաշտի միկրոսկոպիկ անհամասերության նկատմամբ գերզգայունություն, որոնք պայմանավորված են դեօքսիդիացված արյունով, արյան քայքայման տարրերի և երկաթի միկրոսկոպիկ նստվածքներով, ինչպես նաև թույլ է տալիս ստանալ գերզգայուն ապացույցներ ուղեղում արյունազեղման, գլխուղեղի երակային անոթների բարձր լուծելիությամբ:
 Ծրագրային ապահովում՝ դիֆուզիոն կշռման համար: Փաթեթը ապահովում է ինչպես կլինիկական կիրառում սպիտակ նյութի հիվանդության նկատմամբ (Օրինակ սկլերոզ, գլխուղեղի թերի աճ կամ նյարդային թելերի տեղաշարժ զանգվածի միջոցով), ինչպես նաև ժամանակակից հետազոտություններ:
 Ծրագրային ապահովում՝ հնարավորություն է տալիս իրական ժամանակում ավտոմատ հաշվարկել և ցուցադրել վիճակագրական պատկերների (t-արժեքները)՝ BOLD պարադիգմների չափման ընթացքում (ներառյալ 3D շարժման ուղղումն և տարածական զտումը):
 Ապահովում է մոզաիկի պատկերի ձևաչափն:

Առանձին անհրաժեշտ է առանձնացնել կրծքագեղձի բիոպսիա ծրագրային ապահովման առկայությունը
 Կրծքագեղձի բիոպսիայի ծրագիրը պետք է լինի արդյունավետ և հարմար այն միջամտությունների համար, ինչպիսիք են վակուումային բիոպսիան և մետաղալարերի տեղայնացումը: Այն պետք է օժանդակի ինչպես ցանցի մեթոդին, այնպես էլ սյունյակ / սյունյակ եղանակին: Ծրագիրը պետք է ինքնաբերաբար ստանձնի ընտրված թիրախի կորոդինատները և հաշվարկի պահանջվող մուտքի կետը, անկյունը (գրառման / գրառման մեթոդի համար) և ներթափանցման խորությունը:
 Կրծքագեղձի բիոպսիայի ծրագրակազմը պետք է աջակցի ամենատարածված ՄՌՏ պարագաներին և առնվազն հետևյալ ՄՌ- կոճերին.
 - 7 ուղանի կոճ
 - 2- / 4- / 8 -ուղանի կոճ
 - 2- / 10- / 16 -ուղանի կոճ

Օրինակ՝ 7 - ուղանի կոճն ապահովում է որովայնի խոռոչի լայն սեպ կրծքավանդակի միջև կրիտիկական անցում կատարելու ժամանակ: Այս ունիվերսալ կոճն ապահովում բիոպսիան ցանցի տեսքով, ինչպես նաև սյունյակ / սյունյակ, որոնք ունեն գերազանց հասանելիություն նույնիսկ դժվար հասանելի

անատոմիական տարածքներում: 7 ուղանի կոճի պարագաների լրակազմը պետք է պարունակի առնվազն երեք տարր. - 70 սմ միացնող սեպ, որը ապահովում է որովայնը և նստում է ողնաշարի կոճի վերևում, - բարձրությունը կարգավորող գլխամաս և - բարձ, ձեռքերը բարձրացրած դիրքում, հիվանդի ձեռքի օգնության համար: 7 ուղանի կոճի բիոպսիայի նախնական հավաքածուն, պարունակում է պարագաներ Post / Pillar և Grid բիոպսիա մեթոդի համար, ինչպես նաև ասեղների հավաքածու կրթական նպատակներով (ոչ թե մարդկանց վրա օգտագործելու համար), այսինքն. բիոպսիայի բազային հավաքածուն ներառում է. – բիոպսիայի համար կողային և մեդիալցանցեր - ասեղի բլոկ (12G) և բիոպսիայի ցանցերի մարկեր - Բիոպսիայի համար կողային և մեդիալ ցանցեր Post/ Pillar – 12G ասեղ կրողով Post/Pillar սարք և փորձարկման ասեղ (12G), ոչ թե մարդկանց վրա օգտագործման համար:

Հիվանդի հաղորդակցություն.

- ներքին հազորդակցության համակարգ՝ ներառում է հիվանդի հետ հաղորդակցման համալիր և պնևմատիկ ականջակալներ:
- սեղանն արտակարգ իրավիճակներում կանգնեցման համակարգ
- հետազոտման սենյակում բարձրախոսի և ականջակալների ծայնայի կարգավորում
- Բարձրախոսի ծայնի կարգավորում կառավարման սենյակում
- Հիվանդի օգնության զանգի կոճակի առկայություն

Հիվանդի սեղան

Սեղանի հորիզոնական և ուղղահայաց տեղաշարժման համար՝ հետազոտվողի առավելագույն քաշը ոչ պակաս, քան՝ 225 կգ

Սեղանի բարձրությունը հատակից (նվազագույն կետում) ոչ ավել քան 70սմ

պարամետրերի պատկերման մոնիտորներ:

Գրադիենտային համակարգ

Գրադիենտային կոճի ջրային հովացում:

Գրադիենտային դաշտի առավելագույն լարվածությունը, ոչ պակաս, քան՝ 33 մՏլ/մ

Գրադիենտային դաշտի աճի առավելագույն էֆֆեկտիվ արագությունը ոչ պակաս, քան՝ 125 մՏլ/մ/մս

Շերտի նվազագույն հաստությունը 2D և 3D ռեժիմներում համապատասխանաբար կազմում է ոչ ավել քան 0,1 և 0,1 մմ:

Միացված կոճերի հայտնաբերման ավտոմատ համակարգ

Գլխուղեղի և պարանոցի հետազոտության համար նախատեսված անկախ կոճային էլեմենտների քանակը, ոչ պակաս, քան՝ 16

Բազմալիքային կոճ ողնաշարի համար, անկախ կոճային էլեմենտների քանակը, ոչ պակաս, քան՝ 24

Իրանի հետազոտության համար նախատեսված անկախ կոճային էլեմենտների քանակը, ոչ պակաս, քան՝ 12

Զուգահեռաբար հավաքագրման տեխնոլոգիայով իրանի և հողերի հետազոտման համար նախատեսված բազմալիքային ճկուն կոճեր - երկու չափսի

Ճկուն կոճերի անկախ էլեմենտների քանակը, ոչ պակաս, քան՝ 4

Միաժամանակ միացված կոճերի տարրերի քանակը՝ ոչ պակաս քան 138

Միաժամանակ միացված կոճերի քանակը (հիվանդի սեղանում)՝ ոչ պակաս քան 6

Անկախ թվային ուղիների քանակը՝ ոչ պակաս քան 32

Պարագաների և կոճերի համար նախատեսված պահարանի (ոչ ֆերոմագնիսական նյութերից

	<p>պատրաստված) առկայություն</p> <p>Բարձրությունը ոչ պակաս քան 205 սմ</p> <p>Խորությունը ոչ պակաս քան 72 սմ</p> <p>Լայնությունը ոչ պակաս քան 91 սմ</p> <p>Համակարգչային համակարգ</p> <p>Հիմնական աշխատանքային վահանակի կառավարման համակարգիչ</p> <p>Բազմամիջուկանի բազմապրոցեսորային կառուցվածք ունեցող աշխատանքային կայան</p> <p>Պրոցեսոր ոչ պակաս քան 6 միջուկ</p> <p>Հիմնական վահանակի կառավարման համակարգչի օպերատիվ հիշողությունը, ոչ պակաս, քան՝ 64 Գբ</p> <p>Կառավարող համակարգչի համակարգային ինֆորմացիայի և պատկերների պահման ծավալը (SSD տպի), ոչ պակաս, քան՝ 480Գբ</p> <p>Մեկ 24-դյույմից ոչ պակաս բարձր լուծելիության գունավոր առնվազն LCD տիպի մոնիտոր՝ 1920 x 1200 պիքսելից ոչ պակաս էկրանով, ներկառուցված գամմա կոռեկտման ֆունկցիայով ռենտգենյան նկարների օպտիման ցուցադրման (ներկայացման) համար և լույսի ավտոմատ կառավարման համակարգով՝ պայծառության երկարատև ապահովման համար</p> <p>Ցանցային տպման հնարավորություն,</p> <p>նկարների DICOM արխիվացում – օպցիոնալ հնարավորության առկայություն</p> <p>ՄՌ պատկերների վերակառուցման մոդուլ</p> <p>Վերակառուցման մոդուլի բազմապրոցեսորային ճարտարապետություն</p> <p>Պրոցեսոր ոչ պակաս քան 4 միջուկ</p> <p>Վերակառուցման մոդուլի օպերատիվ հիշողություն ոչ պակաս, քան՝ 48 Գբ</p> <p>Հիշողություն (SSD տիպի) ոչ պակաս քան 2 ֆիզիկական սկավառակի</p> <p>1 SSD ոչ պակաս քան 480Գբ</p> <p>2 SSD ոչ պակաս քան 240Գբ</p> <p>Վերակառուցման և սկանավորման զուգահեռաբար կատարվող գործընթաց</p> <p>Մատրիցայի չափսերը ոչ պակաս 1024 x 1024</p> <p>Վերակառուցման արագությունը առանց ինտերպոլյացիայի (մատրիցա 256x256) ոչ պակաս, քան՝ 16900/վրկ</p> <p>Վերակառուցման արագությունը 25% ինտերպոլյացիայով (մատրիցա 256x256) ոչ պակաս, քան՝ 78400/վրկ</p> <p>Մեկ 24-դյույմից ոչ պակաս բարձր լուծելիության գունավոր առնվազն LCD տիպի մոնիտոր՝ 1920 x 1200 պիքսելից ոչ պակաս էկրանով</p> <p>Լրացուցիչ համակարգիչ (Host Computer)</p> <p>Ոչ պակաս քան 2 պրոցեսորների առկայություն, ամեն մեկը առնվազն 4 միջուկով օպերատիվ հիշողություն ոչ պակաս, քան՝ 96 Գբ</p> <p>Հիշողություն (SSD տիպի) ոչ պակաս քան 480Գբ</p> <p>CD/ DVD-R սկավառակի և SDHC-ի առկայություն</p> <p>Աշխատանքային սեղանի առկայություն</p> <p>Երկարություն ոչ պակաս քան 120 սմ</p> <p>Լայնությունը ոչ պակաս քան 80 սմ</p>
--	--

	<p>Բարձրությունը ոչ պակաս քան 72 սմ</p> <p>Համալրված՝</p> <ul style="list-style-type: none"> • ՌՖ վանդակ լրակազմ՝ դիտման պատուհան և բոլոր անհրաժեշտ պարագաներ ներառյալ հետազոտման սենյակի LED լամպերը • Անխափան սնուցման սարք – 2 հատ (ՄՌՏ-ի և Հովացման համակարգի համար) • Հովացման համակարգ • Շարժական մետաղական դետեկտորով • Ինժեկտոր կոնտրաստային նյութի համար, երկու սրվակներով ոչ պակաս քան 100/100մլ <p>Հովացման համակարգ (Chiller)</p> <p>Սառցեարտադրադականություն ոչ պակաս, քան 60 կՎտ, սառեցված ջրի ջերմաստիճանը՝ ոչ ավելի, քան 20 ° C, ջրի հոսքը ոչ պակաս՝ 130 լ / րոպե:</p> <p>Աշխատանքային միջավայրի ջերմաստիճանը -20-ից + 48 ° C</p> <p>Սնուցում 3 / PE 400 Վ- ից 480 Վ / 50/60 Հց</p> <p>Այլ ծառայություններ</p> <p>Երաշխիք ամբողջ համակարգի համար առնվազն 12 ամիս</p> <p>Մոնտաժային նյութերի, մալուխների առկայություն անհրաժեշտ համակարգի տեղադրման համար</p> <p>Տեղադրման, թողարկման աշխատանքների կատարում սերտիֆիկացված մասնագետի կողմից</p> <p>Աշխատակազմի ուսուցում տեղում սերտիֆիկացված մասնագետի կողմից</p> <p>Երաշխիքային սպասարկման ընթացքում 2 ամիսը մեկ անգամ հաճախականությամբ արտադրողի կողմից սերտիֆիկացված ինժեների կողմից պրոֆիլակտիկ տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարում</p> <p>Անհրաժեշտ որակի սերտիֆիկատների առկայություն (ISO, CE)</p> <p>Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված</p>
--	---

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, մագնիսառեզոնանսային տամոգրաֆի համար առաջարկվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի Տեխնիկական բնութագիրը
1	<p>Գերհաղորդիչ մագնիս Մագնիսական դաշտի լարումը՝ 1,5 Տեսլա Մագնիսի մուտքի թունելի տրամագիծը՝ 70 սմ Մեկ սկանի ժամանակ XYZ հարթության մեջ առավելագույն տեսադաշտը՝ 50 x 50 x 50սմ Հելիումի զրոյական ցնդման տեխնոլոգիա</p> <p>Ծրագրային ապահովում ԿԼՀբ հետազոտությունների ծրագրային փաթեթի առկայություն (Neuro XT Package) Անգիոգրաֆիկ հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Angio Pack) Անոթային հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Cardiac Pack) Քաղցկեղի հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Onco Pack) Մամոգրաֆիկ հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Breast Pack) Երեխաների հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն</p>

(Pediatric) Հոդերի և ողնաշարի հետազոտությունների համար ծրագրային փաթեթի առկայություն (Ortho Pack) Շնչառություն պահումով և առանց, որովայնի խոռոչի, կոնք, կողոնգրաֆիա, երիկամների, ուրոգրաֆիայի համար ծրագրային փաթեթի առկայություն (Body XT Pack) ավելի մանրամասն ուսումնասիրությունների ծրագրային փաթեթի առկայություն (Scientific Pack) Գրանցման ինտեգրված ծրագիրը (մեկ գրանցում) նախատեսված է օպտիմալացնել եռաչափ (3D) անատոմիական պատկերների համադրությունը և համեմատությունը՝ ստացված CT, MRI, PET (պոզիտրոնաին էմիսիոն տոմոգրաֆիա), SPECT (միա ֆոտոնային էմիսիոն համակարգչային տոմոգրաֆիա) և անգիոգրաֆիայի հետ:(Integrated Registration Full Fusion)

Ծրագրային ապահովում՝ ուղեղի պերֆուզիայի տվյալների ընդլայնված մշակման և գնահատման համար: Ծրագրային ապահովում՝ ուռուցքաբանության արդյունավետ գնահատման և վերլուծության, ինչպես նաև օջախի սեզմենտավորման համար: Ծրագրային ապահովում՝ բոլոր կոնտրաստների արդյունավետության և գլխից և ոտք պատկերների մշակման առօրյա ծրագրերի արագացման համար: Ծրագրային ապահովում՝ դիֆուզիոն-կշռված (DWI / DTI) և BOLD ֆունկցիոնալ ՄՌՏ-ի վիզուալիզացիայի արագացման համար: Այս փաթեթի օգնությամբ, սկանավորման ժամանակը հնարավոր է կրճատել և հնարավոր է ստանալ ավելի մեծ տարածական / դիֆուզիոն լուծելիության պատկերներ: Ծրագրային ապահովում՝ ուղեղի բարձր լուծելիությամբ արտացոլման եռաչափ պատկերման համար, մագնիսական դաշտի միկրոսկոպիկ անհամասերության նկատմամբ գերզգայունություն, որոնք պայմանավորված են դեօքսիդիացված արյունով, արյան քայքայման տարրերի և երկաթի միկրոսկոպիկ նստվածքներով, ինչպես նաև թույլ է տալիս ստանալ գերզգայուն ապացույցներ ուղեղում արյունազեղման, գլխուղեղի երակային անոթների բարձր լուծելիությամբ: Ծրագրային ապահովում՝ դիֆուզիոն կշռման համար: Փաթեթը ապահովում է ինչպես կլինիկական կիրառում սպիտակ նյութի հիվանդության նկատմամբ (Օրինակ սկլերոզ, գլխուղեղի թերի աճ կամ նյարդային թեքերի տեղաշարժ զանգվածի միջոցով), ինչպես նաև ժամանակակից հետազոտություններ: Ծրագրային ապահովում՝ հնարավորություն է տալիս իրական ժամանակում ավտոմատ հաշվարկել և ցուցադրել վիճակագրական պատկերների (t-արժեքները)՝ BOLD պարադիգմների չափման ընթացքում (ներառյալ 3D շարժման ուղղումն և տարածական զտումը): Ապահովում է մոզաիկի պատկերի ձևաչափն:

(Breast Pack) կրծքագեղձի բիոպսիա ծրագրային ապահովման առկայությունը Կրծքագեղձի բիոպսիայի ծրագիրը արդյունավետ և հարմար է այն միջամտությունների համար, ինչպիսիք են վակուումային բիոպսիան և մետաղալարերի տեղայնացումը: Այն օժանդակում է ինչպես ցանցի մեթոդին, այնպես էլ սյունյակ / սյունյակ եղանակին: Ծրագիրը ինքնաբերաբար ստանձնում է ընտրված թիրախի կոորդինատները և հաշվարկի պահանջվող մուտքի կետը, անկյունը (գրառման / գրառման մեթոդի համար) և ներթափանցման խորությունը: Կրծքագեղձի բիոպսիայի ծրագրակազմը աջակցում է ամենատարածված ՄՌՏ պարագաներին և առնվազն հետևյալ ՄՌ կոճերին. - 7 ուղանի կոճ - 2- / 4- / 8 -ուղանի կոճ - 2- / 10- / 16 -ուղանի կոճ Օրինակ՝ 7 - ուղանի կոճն ապահովում է որովայնի խոռոչի լայն սեպ կրծքավանդակի միջև կրիտիկական անցում կատարելու ժամանակ: Այս ունիվերսալ կոճն ապահովում բիոպսիան ցանցի տեսքով, ինչպես նաև սյունյակ / սյունյակ, որոնք ունեն գերազանց հասանելիություն նույնիսկ դժվար հասանելի անատոմիական տարածքներում: 7 ուղանի կոճի պարագաների լրակազմը պետք է պարունակի առնվազն երեք տարր. - 70 սմ միացնող սեպ, որը ապահովում է որովայնը և նստում է ողնաշարի կոճի վերևում, - բարձրությունը կարգավորող գլխամաս և - բարձ, ձեռքերը բարձրացրած դիրքում, հիվանդի ձեռքի օգնության համար: 7 ուղանի կոճի բիոպսիայի նախնական հավաքածուն, պարունակում է պարագաներ Post / Pillar և Grid բիոպսիա մեթոդի համար, ինչպես նաև ասեղների հավաքածու կրթական նպատակներով (ոչ թե մարդկանց վրա օգտագործելու համար), այսինքն. բիոպսիայի բազային հավաքածուն ներառում է. - բիոպսիայի համար կողային և մեդիալցանցեր - ասեղի բլոկ (12G) և բիոպսիայի ցանցերի մարկեր - Բիոպսիայի համար կողային և մեդիալ ցանցեր Post/ Pillar - 12G ասեղ կողով Post/Pillar սարք և փորձարկման ասեղ (12G), ոչ թե մարդկանց վրա օգտագործման համար:

Հիվանդի հաղորդակցություն. • ներքին հազորդակցության համակարգ՝ ներառում է հիվանդի հետ հաղորդակցման

համալիր և պնևմատիկ ականջակալներ: • սեղանն արտակարգ իրավիճակներում կանգնեցման համակարգ • հետազոտման սենյակում բարձրախոսի և ականջակալների ձայնայի կարգավորում • Բարձրախոսի ձայնի կարգավորում կառավարման սենյակում • Հիվանդի օգնության զանգի կոճակի առկայություն

Հիվանդի սեղանը Սեղանի հորիզոնական և ուղղահայաց տեղաշարժման համար՝ հետազոտվողի առավելագույն քաշը ոչ պակաս, քան՝ 227 կգ Սեղանի բարձրությունը հատակից (նվազագույն կետում) ոչ ավել քան 70սմ

պարամետրերի պատկերման մոնիտորներ: Գրադիենտային համակարգ Գրադիենտային կոճի ջրային հովացում: Գրադիենտային դաշտի առավելագույն լարվածությունը, 44 մՏ/մ Գրադիենտային դաշտի աճի առավելագույն էֆֆեկտիվ արագությունը 200 մՏ/մ/մս Շերտի նվազագույն հաստությունը 2D և 3D ռեժիմներում համապատասխանաբար կազմում է ոչ ավել քան 0,1 և 0,1 մմ: Միացված կոճերի հայտնաբերման ավտոմատ համակարգ

Գլխուղեղի և պարանոցի հետազոտության համար նախատեսված անկախ կոճային էլեմենտների քանակը, ՝ 28 Բազմալիքային կոճ ողնաշարի համար, անկախ կոճային էլեմենտների քանակը, ՝ 40 Իրանի հետազոտության համար նախատեսված անկախ կոճային էլեմենտների քանակը, ՝36 Ջուգահեռաբար հավաքագրման տեխնոլոգիայով իրանի և հողերի հետազոտման համար նախատեսված բազմալիքային ճկուն կոճեր - երկու չափսի ճկուն կոճերի անկախ էլեմենտների քանակը, 30

Միաժամանակ միացված կոճերի տարրերի քանակը ՝ 140 Միաժամանակ միացված կոճերի քանակը (հիվանդի սեղանում)՝ 6 Անկախ թվային ուղիների քանակը՝64

Պարագաների և կոճերի համար նախատեսված պահարանի (ոչ ֆերոմագնիսական նյութերից պատրաստված) առկայություն Բարձրությունը ոչ պակաս քան 205 սմ Խորությունը ոչ պակաս քան 72 սմ Լայնությունը ոչ պակաս քան 91 սմ

Համակարգչային համակարգ Հիմնական աշխատանքային վահանակի կառավարման համակարգիչ Բազմամիջուկանի բազմապրոցեսորային կառուցվածք ունեցող աշխատանքային կայան Պրոցեսոր 4 միջուկ Հիմնական վահանակի կառավարման համակարգչի օպերատիվ հիշողությունը, ՝ 64 Գբ Կառավարող համակարգչի համակարգային ինֆորմացիայի և պատկերների պահման ծավալը (SSD տպի), 1024Գբ

Մեկ 24-դյույմից ոչ պակաս բարձր լուծելիության գունավոր առնվազն LCD տիպի մոնիտոր՝ 1920 x 1200 պիքսելից էկրանով, ներկառուցված գամմա կոռեկտման ֆունկցիայով ռենտգենյան նկարների օպտիման ցուցադրման (ներկայացման) համար և լույսի ավտոմատ կառավարման համակարգով՝ պայծառության երկարատև ապահովման համար

Ցանցային տպման հնարավորություն, նկարների DICOM արխիվացում – օպցիոնալ հնարավորության առկայություն

ՄԴ պատկերների վերակառուցման մոդուլ Վերակառուցման մոդուլի բազմապրոցեսորային ճարտարապետություն Պրոցեսոր 2x12 միջուկ Վերակառուցման մոդուլի օպերատիվ հիշողություն ՝ 96 Գբ Հիշողություն (SSD տիպի) կամ 2 ֆիզիկական սկավառակի 1 SSD 480Գբ 2 SSD 240Գբ կամ 1 հատ SSD 1000 Գբ Վերակառուցման և սկանավորման զուգահեռաբար կատարվող գործընթաց

Մատրիցայի չափսերը ոչ պակաս 1024 x 1024 Վերակառուցման արագությունը առանց ինտերպոլյացիայի (մատրիցա 256x256) ՝ 63000/վրկ Վերակառուցման արագությունը 25% ինտերպոլյացիայով (մատրիցա 256x256) (արտադրողը չի հրապարակու այս ցուցանիշը) Մեկ 24-դյույմ բարձր լուծելիության գունավոր LCD տիպի մոնիտոր՝ 1920 x 1200 պիքսելից

Լրացուցիչ համակարգիչ (Host Computer)

	<p>Լրացուցիչ համակարգիչ:Ոչ պակաս քան 2 պրոցեսորների առկայություն, ամեն մեկը առնվազն 4 միջուկով օպերատիվ հիշողություն՝ 96 Գբ Հիշողություն (SSD տիպի) 2 ֆիզիկական սկավառակի 1 SSD 512 Գբ 2 SSD 256Գբ CD/ DVD-R սկավառակի և SDHC-ի առկայություն</p> <p>Աշխատանքային սեղանի առկայություն Երկարություն 120 սմ Լայնությունը 80 սմ Բարձրությունը ն 72 սմ</p> <p>Համալրված՝</p> <ul style="list-style-type: none"> • ՌՖ վանդակ լրակազմ՝ դիտման պատուհան և բոլոր անհրաժեշտ պարագաներ ներառյալ հետազգրտման սենյակի LED լամպերը • Անխափան սնուցման սարք – 2 հատ (ՄՌՏ-ի և Հովացման համակարգի համար) • Հովացման համակարգ • Շարժական մետաղական դետեկտորով • Ինժեկտոր կոնտրաստային նյութի համար, երկու սրվակներով ոչ պակաս քան 100/100մլ <p>Հովացման համակարգ (Chiller) Սառցեարտադրադականություն ոչ պակաս, քան 60 կՎտ, սառեցված ջրի ջերմաստիճանը՝ 16- 20 ° C, ջրի հոսքը >= 130 լ / րոպե: Աշխատանքային միջավայրի ջերմաստիճանը -20-ից + 48 ° C Սնուցում 3 / PE 400 Վ- ից 480 Վ / 50/60 Հց</p> <p>Այլ ծառայություններ Երաշխիք ամբողջ համակարգի համար 12 ամիս Մոնտաժային նյութերի, մալուխների առկայություն անհրաժեշտ համակարգի տեղադրման համար</p> <p>Տեղադրման, թողարկման աշխատանքների կատարում սերտիֆիկացված մասնագետի կողմից Աշխատակազմի ուսուցում տեղում սերտիֆիկացված մասնագետի կողմից Երաշխիքային սպասարկման ընթացքում 2 ամիսը մեկ անգամ հաճախականությամբ արտադրողի կողմից սերտիֆիկացված ինժեների կողմից պրոֆիլակտիկ տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարում</p> <p>Անհրաժեշտ որակի սերտիֆիկատների առկայություն (ISO, CE) Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված</p>
--	--

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար մագնիսառեզոնանսային տամոգրաֆի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք, **որի քննության ընթացքում «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն միջնորդել է հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակել փորձաքննություն և պարտավորվել հոգալ փորձաքննության ծախսերը:**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 19.08.2020թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի ընթացքում հայտնելով նշված բողոքի շրջանակներում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության մասին՝ կողմերին ընձեռնել է հնարավորություն ներկայացնել այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ կլինեն փորձաքննության իրականացման համար:

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է Signa™ Artist Data Sheet-ով ներկայացված տեղեկատվության՝ բողոքին վերաբերելի տեխնիկական պարամետրերի հայերեն թարգմանությունը:

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից փորձագետին տրամադրելու համար ներկայացվել են մագնիսառեզոնանսային տամոգրաֆին առնչվող հետևյալ փաստաթղթերը.

GE Healthcare ընկերության 13.08.2020թ. թիվ 8/6810-20 գրությունը՝ ուղղված «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ին՝ հետևյալ բովանդակությամբ.

««General Electric» կորպորացիայի «GE Healthcare» ընկերությունների խմբի «GE Healthcare» ՍՊԸ, հայտնում է Ձեզ իր հարգանքը և ի պատասխան Ձեր հարցմանը տեղեկացնում է առ այն, որ SIGNA™-Artist մագնիսա-ռեզոնանսային տամոգրաֆների վրա ռեկոնստրուկցիայի բարձր արագություն ստանալու և ստացված պատկերները մշակելու համար օգտագործվում են երկու հաշվարկային մեխանիզմներ: Առաջին հաշվարկային կենտրոնը տեղակայված է կառավարման կոնսոլի մեջ, իրենից ներկայացնում է նորագույն պրոցեսոր, որը ստեղծված է 14նր տեխնոլոգիայով, որը թույլ է տալիս ստանալու անհավանական արտադրողականություն ամենառեսուրսաձավալ և ինտերակտիվ իրքերում, պրոցեսորն իր մեջ ներառում է 4 ֆիզիկական միջուկներ, ապահովվում է 8 հոսանքներով, ինչը երաշխավորում է հետ-վերամշակման հավելվածների ամենապահանջվող կատարման գերարագություններ: Հետագայում պատկերները կառավարման կոնսոլից փոխանցվում են ծավալային ռեկոնստրուկցիայի մեխանիզմ, որը տեղակայված է առանձին բլոկում, որ իր հերթին ֆուլկրոնալ ենթարկվում է կառավարման կոնսոլի կենտրոնին, որը թույլ է տալիս ստեղծել պատկերներ իրական ժամանակում, անգամ երբ ներգրավված են զուգահեռ վիզուալիզացման տվյալների ծավալուն հավաքածուներ: Ռեկոնստրուկցիայի մեխանիզմն իր մեջ ներառում է 2 պրոցեսոր, յուրաքանչյուրը՝ 12-անկախ միջուկներով և ապահովվում է 24 հոսանքներ: Ներկառուցված հիշողությունը և չմշակված տվյալների լոկալ պահոցը՝ ամենապահանջվող հավելվածներում տվյալների միաժամանակյա հավաքագրման և ռեկոնստրուկցիայի համար: Այսպիսով, պատկերների ստացման և մշակման պրոցեսում ներգրավված են կոնսոլների պրոցեսորների և ռեկոնստրուկցիայի բլոկի 28 միջուկներ: Բացի դրանից, SIGNA™-Artist-ում օգտագործվում է Orchestra գործիքների հավաքածուն, բարձարտադրողականության հաշվարկների ծրագրային ապահովման գրադարաններ, որը նոր հնարավորություններ է տալիս առաջադեմ ռեկոնստրուկցիաների տարրերի

ինտեգրման համար: Պրոցեսորների արդի ճարտարապետությունը էապես բարձրացնում է արտադրողականությունը՝ պատկերների վերականգնման արագության և աշխատանքային պրոցեսի ընդհատումների նվազագույնին հասացնելու շնորհիվ»:

GE Healthcare ընկերության 19.08.2020թ. թիվ 8/6891-20 գրությունը՝ ուղղված «Տելիս-Մեդ» ՓԲԸ-ին՝ հետևյալ բովանդակությամբ.

««General Electric» կորպորացիայի «GE Healthcare» ընկերությունների խմբի «GE Healthcare» ՍՊԸ, հայտնում է Ձեզ իր հարգանքը և ի պատասխան Ձեր հարցմանը տեղեկացնում է MPT GE Signa Artist բնութագրերի վերաբերյալ: 1. Մատակարարման կոմպլեկստ իր մեջ ներառում է 8-խողովակային պարույր կրծքագեղձերի համար, կոմպլեկտում՝ բոիոպսիա կատալեո համար հատուկ վանդակով: Բացի տվյալ պարույրը համակարգը կարող է աշխատել նաև կրծքագեղձերի համար նախատեսված այլ պարույրներով: Նաև համակարգն ունի բոլոր անհրաժեշտ ծրագրային ապահովումները՝ MPT հսկողության տակ բոիոպսիա կատարելու համար: 2. Գլխի և պարանոցի հետազոտություններ կատարելու պարույրների անկախ տարրերի քանակը՝21: 3. Կոմպլեկտավորման մեջ մտնում են բազմախողովակ ճկուն պարույրներ (2 չափսերի), որոնք նախատեսվածն են մարմնի և հոդերի հետազոտության համար՝ զուգահեռ սկանավորման տեխնոլոգիայով: 4. Ճկուն պարույրների անկախ տարրերի քանակը՝16: 5. Պարույրի միաժամանակ միացված տարրերի քանակը՝140: 6. Անկախ թվային խողովակների քանակը՝ 64»:

GE Healthcare ընկերության 20.08.2020թ. թիվ 8/6914-20 գրությունը՝ ուղղված «Տելիս-Մեդ» ՓԲԸ-ին՝ հետևյալ բովանդակությամբ.

««General Electric» կորպորացիայի «GE Healthcare» ընկերությունների խմբի «GE Healthcare» ՍՊԸ, հայտնում է Ձեզ իր հարգանքը և ի պատասխան Ձեր հարցմանը տեղեկացնում է MPT GE Signa Artist բնութագրերի վերաբերյալ: Ռադիոհաճախականության համակարգը նախագծված է այնպես, որպեսզի ապահովի ցանկացած կոմբինացիաների ՌՀ-խողովակներ միացնելու հնարավորությունը: Մարմնի հետազոտության ժամանակ ներգրավված է հիվանդի սեղանի մեջ ինտեգրացված պարույրը, ինչպես նաև գլխի/պարանոցի և մարմնի համար պարույրները, որոնք միացվում են հիվանդի սեղանի պորտերին և մագնիսի կորպուսին: Այսպիսով, բացակայում է պորտերի անբավարար լինելու պատճառով սկանավորման պրոցեսում ՌՀ-խողովակների վերամիացիացման անհրաժեշտությունը: Ճկուն ողովակների միջոցով կրծքագեղձերի կամ

հողերի հետազոտությունը հանդիսանում են ինքնուրույն հետազոտություններ և չեն պահանջում լրացուցիչ ողովակների միացում: Իսկ Digital Surround (DST) տեխնոլոգիայի շնորհիվ հանրավոր է լինում միաժամանակ ստանալ ազդանշաններ և գենտրիի մեջ ներկառուցված պարույրներից և պարույրների մակերեսներից: Մակերեսային պարույրների ընդունիչ տարրերից և գենտրիի մեջ ներկառուցված պարույրներից ստացված թվային ազդանշանների միացման ճանապարհով հասնում ենք ազդանշան/աղմուկ և զգայունակության հարաբերակցության գերազանց ցուցանիշների»:

«ՀՀ-ում մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի հիմնադիր, առողջապահության նախարարության նախկին գլխավոր մասնագետ բժիշկ-ռադիոլոգի կարծիքը GE Signa Artist 1.5 T ՄՌՇ համակարգի մասին՝ հետևյալ բովանդակությամբ.

«GE Signa Artist 1.5 T ՄՌՇ համակարգն ունի գրադիենտային դաշտի առավելագույն լարվածություն՝ 44 մՏ/մ, և գրադիենտային դաշտի աճի առավելագույն էֆեկտիվ արագությունը կազմում է 200 մՏ/մ/մվ: Այս ցուցանիշները համընկնում են 3T ՄՌՇ-ների գրադիենտային դաշտի հզորությանը: Համեմատելով գոյություն ունեցող այլ արտադրողների և մրցույթի տեխնիկական բնութագրով պահանջվող 1,5T ՄՌՇ համակարգերի գրադիենտային դաշտի առավելագույն լարվածությունը (33 մՏ/մ) և գրադիենտային դաշտի առավելագույն արագությունը (125/մՏ/մ/մվ), պարզ է դառնում, որ GE Signa Artist ՄՌՇ-ի գրադիենտային դաշտի հզորությունը 50 տոկոսով գերազանցում է այլ արտադրողների նմանատիպ սարքավորումների ցուցանիշները: Դրա հաշվին GE Signa Artist-ի յուրաքանչյուր կոճը ընդգրկում է մինչև 30 տոկոս ավել հետազոտման մակերես և արդյունքում ստացվում է տոկոսային համազոր պատկերի մաքրություն՝ միևնույն ժամանակ ընդգրկելով ավելի մեծ հետազոտման մակերես: Դա թույլ է տալիս 5 կոճի՝ մինչև 30 տոկոս ավել հզորության օգնությամբ կատարել նույն խնդիրը, ինչը այլ սարքերը ի վիճակի են անելու 6 կոճով:

Վերոհիշյալ պարամետրերը հնարավոր են դարձնում կիրառել բազմախողովակային տեխնոլոգիան առավելագույն քանակով՝ գործարկելով 64 խողովակ 32 փոխարեն: Խողովակների նման գերազանցող քանակը ստեղծում է հնարավորություն ստանալ ավելի որակյալ, ինֆորմատիվ և հոմոգեն պատկերներ, ինչը դիագնոստիկ առումով հետազոտող բժշկի համար շատ կարևոր է, իսկ վերը նկարագրված գրադիենտային դաշտի հզորությունը հնարավոր է դարձնում մինչ այդ անհավատալի թվացող 0,1 մմ հաստությամբ շերտերում ավելի մաքուր պատկերների ստացում՝ մանրամասնությունը ու զգայունությունը

խիստ աճում է, ոչ միայն 3D այլ նաև 2D ռեժիմներում: Այս տեխնոլոգիան ստանում է 20 տոկոս ավելի բարձր ազդակ/աղմուկ հարաբերակցություն այլ արտադրողների կողմից օգտագործվող տեխնոլոգիաների նկատմամբ, թույլ է տալիս գտնել միջինացված օգտակար ազդակը ավելի բարձր արագությամբ՝ ստեղծելով հիվանդի և հետազոտողի համար կոմֆորտ իրավիճակ, նվազեցնելով հետազոտության տևողությունը այլ սարքավորումների համեմատ:

Բացի այդ, խողովակների նման աննախադեպ քանակը (64-ը 32-ի փոխարեն) բերում է համակարգի ավելի բարձր հուսալիության, քանի որ մի քանի խողովակների խափանման դեպքում՝ ռադիոհաճախական կոճը շարունակում է աշխատել և տալ ճշգրիտ ինֆորմացիա: Կոճի խողովակների նույնիսկ կեսի շարքից դուրս գալու դեպքում, կոճը իր հզորությամբ և աշխատունակությամբ չի զիջի, այլ ընդամենը կհավասարվի այլ արտադրողների նմանօրինակ համակարգերի կոճերին, քանի որ իր օգտակար և աշխատող խողովակներով կատարում է իր ֆունկցիան, ինչն էլ բարձրացնում է համակարգի հուսալիությունը և անխափան աշխատանքը: Նման կոճերի օգտագործման դեպքում վերանորոգման անհրաժեշտության հավանականությունը ավելի ցածր է երկարատև ժամանակահատվածի համար, ինչի շնորհիվ հետազոտության ինքնարժեքը կտրուկ նվազում է:

Նշենք որ GE Signa շարքի սարքավորումները միակն են, որոնք թույլ են տալիս վերազինել ամբողջ համակարգը առանց սարքավորումը փոխարինելու՝ թարմացնելով միայն նրա բաղադրիչները, և 5 տարի անց կարելի է ունենալ ժամանակին համահունչ նոր սարքավորում՝ խնայելով 50-70 տոկոս միջոցներ:

Թերություններ

GE ընկերությունը խոստացել էր 2020 թվականին կատարելագործել տեխնալոգիան և ընդամենը 4 կոճի շնորհիվ ծածկել ամբողջ մարմինը, ինչը մյուս արտադրողները անում են 6 կոճի շնորհիվ:

GE ընկերության ՄՌՇ համակարգերը գնային առումով շարունակում են մնալ ամենաթանկ սարքավորումների շարքում, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ մրցակցային առումով, եթե այս խոչընդոտը հնարավոր է դարձել չեզոքացնել, ապա ընտրությունը դառնում է միանշանակ»:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով

հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 17-րդ կետով, **հաշվի առնելով «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից 03.08.2020թ. ներկայացված բողոքը բազմակողմանի ուսումնասիրելու անհրաժեշտությունը և վերջինիս պարտավորվածությունը փորձաքննության ծախսերը հոգալու վերաբերյալ՝ 24.08.2020թ. որոշում է կայացրել «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի քննության շրջանակներում փորձաքննություն նշանակելու և փորձաքննության հրականացումը «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին հանձնարարելու վերաբերյալ:**

Խնդրի պարզաբանման համար փորձագետներին առաջադրվել են հետևյալ հարցերը.

1. Արդյո՞ք «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Ընթացակարգի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, մազնիսառեզոնանսային տամոգրաֆի համար առաջարկված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է արտադրողի՝ «GE Healthcare» LLC-ի կողմից սահմանված տեխնիկական բնութագրին (ուսումնասիրության ենթակա հիմք՝ «GE Healthcare» LLC-ի կողմից տրամադրված Signa™ Artist Data sheet):

2. Եթե համապատասխանում է «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Ընթացակարգի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, մազնիսառեզոնանսային տամոգրաֆի համար առաջարկված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է արտադրողի՝ «GE Healthcare» LLC-ի կողմից սահմանված տեխնիկական բնութագրին, ապա ուսումնասիրել կից ներկայացվող Ընկերության կողմից հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը և «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար մազնիսառեզոնանսային տամոգրաֆի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագիրը և տալ եզրակացություն՝ արդյոք Ընկերության կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Պատվիրատուի կողմից «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով բաց մրցույթի հրավերով մազնիսառեզոնանսային տամոգրաֆի ձեռքբերման համար սահմանված տեխնիկական բնութագրին, այսինքն՝ արդյո՞ք Պատվիրատուի անհրաժեշտ կարիքին համապատասխան

ապրանք է ներկայացրել Ընկերությունը թիվ 1.1 Հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, թե՛ ոչ:

3. Եթե «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող GE Signa Artist 1.5 T ՄՌՇ համալիրի բնութագրի և հրավերով սահմանվող գնման առարկայի բնութագրի միջև առկա են անհամապատասխանություններ, ապա արդյո՞ք այդ անհամապատասխանություններն ազդում են ընկերության կողմից առաջարկվող համալիրի որակական բնութագրի վրա, ի տարբերություն այն նմանատիպ սարքավորումների բնութագրի, որն այդ մասով համապատասխանում է հրավերի պահանջներին, թե՛ ոչ և եթե ազդում են, ինչու՞:

4. Արդյո՞ք GE Signa Artist 1.5 T ՄՌՇ համալիրն իր հինգ կոճի հնարավորությամբ ապահովում է առաջադրված խնդիրների իրականացումը նույն որակով, ինչ որ նմանատիպ այլ արտադրության սարքավորումները, որոնք ունեն վեց կոճի միացման հնարավորություն:

5. Արդյո՞ք GE Signa Artist 1.5 T ՄՌՇ համալիրի կոնսուլային համակարգչում գտնվող 4 միջուկները և ռեկոնստրուկցիոն հանգույցում 2 պրոցեսորներում գտնվող՝ յուրաքանչյուրի 12 միջուկներն ապահովում են առաջադրված խնդիրների իրականացումը նույն որակով, ինչ որ նմանատիպ այն սարքավորումները, որոնց կոնսուլային համակարգիչն ունի 6 միջուկ»:

Այնուհետև, «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 07.09.2020թ. գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Թեև մեր կազմակերպությունը վերոգրյալ գրությամբ հայտնել էր, որ պատրաստակամ է պաշտոնական փաստաթղթի փորձաքննության ծախսերը հոգալու, եթե կա անհրաժեշտություն, սակայն հաշվի առնելով, որ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի ներկայացուցիչները 24.08.2020թ. նիստի ժամանակ ընդունել են, որ մեր ներկայացված պահանջները համապատասխանում են իրականությանը (հղումը՝ https://www.youtube.com/watch?v=nWgtDi_xs-c), և «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի գումարային անբնական պահանջը (մոտավորապես 800.000 դրամ), ինչպես նաև այն հանգամանքը, որ մրցույթը կազմակերպված է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ուստի մեր կազմակերպությունը չի կարող հոգալ տվյալ ծախսերը և խնդրում ենք Ձեզ, որոշումը կայացնել վերոգրյալ օրենքի 50-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, այն է «Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և

ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները»:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 17-րդ կետի համաձայն՝ **բողոքի քննության ժամանակ ծագող հարուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով Անձը կարող է նշանակել փորձաքննություն** կամ դիմել տվյալ բնագավառը կարգավորող պետական մարմիններին՝ դիրքորոշում ստանալու համար:

Նույն կարգի 18-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության ընթացքում կայացվող որոշումները բաղկացած են ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Որոշումները ստորագրվում և կնքվում են այն կայացրած Անձի կողմից: **Անձի կողմից բողոքի քննության ընթացքում կայացված որոշումները պետք է լինեն օրինական, հիմնավորված և պարճառաբանված:**

Պետական գնումների մասին համաձայնագրի (ուժի մեջ է մտել 15.09.2011թ.) 20-րդ հոդվածի 7-րդ մասի բ) կետը սահմանում է, որ **բողոքարկման ընթացակարգերը պետք է ապահովեն բողոքի հիմնավորվածության գնահատում և դրա վերաբերյալ որոշման հնարավորություն:**

Պետական գնումների մասին վերանայված համաձայնագրի (ուժի մեջ է մտել 05.06.2015թ.) 18-րդ հոդվածի 6-րդ մասի գ) կետի համաձայն՝

Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ դատարան չհանդիսացող քննող մարմինը կայացնի իր որոշումը, որը ենթակա է դատական քննության կամ կիրառի այնպիսի ընթացակարգեր, որոնք նախատեսում են, որ քննող մարմինը պետք է իր որոշումները կամ առաջարկները ընդունի ժամանակին, **գրավոր և պետք է ներառի յուրաքանչյուր որոշման կամ առաջարկի ընդունման հիմքերի բացատրությունը:**

Այսպիսով՝ ապահովելով վերոնշյալ Համաձայնագրերով և իրավական նորմերով երաշխավորված բողոքարկման իրավունքի իրացումը և հաշվի առնելով բողոքի օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում հիմնավորված որոշում կայացնելու համար փորձագետի եզրակացության անհրաժեշտությունը՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բավարարվել է «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդությունը, սակայն վերջինս հրաժարվել

է հոգալ փորձաքննության ծախսերը՝ հրաժարվելով փորձաքննության ծառայությունից, որի արդյունքում փորձաքննություն չի իրականացվել:

Քանի որ ԳԲԲԱ-ՆԳ-2020/68 բողոքի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պետք հաստատվեին սույն գործի քննության շրջանակներում նշանակված փորձաքննության արդյունքում ստացված փորձագետի եզրակացությամբ, ինչպես նաև այն, որ փորձաքննությունը չի իրականացվել միջնորդությունը ներկայացրած Ընկերության կողմից փորձաքննության ծառայությունից հրաժարվելու պատճառով, գտնում եմ, որ սույն դեպքում դրա բացասական հետևանքը պետք է կրի միջնորդությունը ներկայացրած կողմը՝ «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ, գտնում եմ, որ բողոքը ենթակա է մերժման:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի կողմից ներկայացված բողոքի առանձին կետերի վերաբերյալ տրված դիրքորոշմանը և եզրակացությանը, ապա գտնում եմ, որ դրանք առանց փորձագետի եզրակացության հետ համադրելու բավարար չեն բողոքի հիմքերը հիմնավոր համարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից 03.08.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ